Կարոտի օրոր

Վահագն Ասլանյան

Լուռ ու խավարչտին գիշերվա մթին,
Բազմած լուսնի մեղմ ճառագայթին,
Կյանք տալով վաղուց կորած հեքիաթին՝
Հոր խոսքերն ահա թռչում են կրկին,
Օրոր են ասում, որ քնի որդին:

Օրոր են ասում փոքրիկ չագուկին,
Շոյում են նրա երազկոտ հոգին,
Պատմում են նրան հենց իր մասին.
Թե ինչպես էր նա հաղթում վիշապին,
Ու ազատում էր գերված աղջնակին:

Թե ինչպես զինված թրով, վահանով,
Արշավում էր նա՝ բարուն օգնելով,
Չարը ճզմելով ու տապալելով:
Իսկ երբ չէր հաղթում չարին նա սրով,
Ապա հաղթում էր իր ճարտար լեզվով:

Պատմում է հայրը, և նրա հոգին
Թռչում է հեռու, սավառնում կրկին,
Մանկության օրերը բերում առաջին,
Երբ ինքը, պառկած իր հոր կողքին,
Ականջ էր դնում նրա հեքիաթին:

Հստակ հիշում է նա օրերը հին,
Երբ ինքն էր հաղթում չար հրեշներին,
Որ ագահ նստած սարի աղբյուրին
Ջուր չէին տալիս գյուղացիներին...
Ու քուն էր մտնում նա իր հոր գրկին:

Հիշում է անցած օրերը նա հին,
Ուզում է տեսնել իր հորը կրկին,
Հարցնել նրան աշխարհի մասին,
Վիճել նրա հետ, համոզվել կրկին,
Որ դեռ փոքր է ինքն իր հոր կողքին:

Եւ միտքը թռչում, ճախրում է հեռվում,
Կարոտի տաք ու ցուրտ աշխարհում:
Հին հեքիաթներ է այնտեղից բերում,
Օրոր է ասում իր փոքրիկ որդուն:
Ննջում է անուշ տղան հոր գրկում...

26 հունվար 2025թ.

Դժվար ժամանակներ

Վահագն Ալանյան

Խառնվել են հինն ու նորը,
Կարծես հագել են նույն շորը:
Եղբայրն է ուրանում եղբորը,
Դեմ է ելել հորն ու մորը:
Ո՞ւր կորավ մեր անդորրը:

Ո՞ւր մնաց մեր միակ ճիշտը,
Մեկն ագահ է, մյուսն անկուշտ է,
Երրորդն էլ նրանց հետ հաշտ է:
Թվում է՝ չորրորդին հեշտ է.
Տանում է լուռ նա իր վիշտը:

Ո՞վ ցույց կտա մեզ ելքը:
Մեկը խոստացավ մեր վերելքը,
Բայց երգում է միշտ հին երգը:
Մյուսը, քամելով մեր բաց վերքը,
Դեռ թափ է տալիս իր չեռքը:

Դժվար են այս ժամանակները:
Հեշտ է մեղավորներ փնտրելը
Ու անիմաստ շաղակրատելը:
Թե հեշտ լիներ խոհեմ լինելը,
Դժվար չէին լինի ժամանակները...

26 նոյեմբեր 2020